ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՊՊԾ-ԳՀԽԾՁԲ-1/2021-37-1

ք. Երևան «13» 01 2022թ.

<<Պետական պահպանության ծառայություն>> -ն, ի դեմս Պետական պահպանության ծառայության պետ Ս. Հովհաննիսյանի, որը գործում է <<Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին>> ՀՀ օրենքի և Պետական պահպանության ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և ՍԱՄԱՐՏ-ՇԻՆ ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ս. Օրդուխանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **վերակառուցման՝ վերնահարկի իրականացման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների մատուցման պարտավորությունը** (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Եթե պայմանագրի N 5 հավելվածով (Աղյուսակ N 1) կապալի օբյեկտի և դրա առանձին մասերի համար սահմանված երաշխիքային ժամկետների ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա տեխնիկական հսկողություն իրականացնող անձը պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատվիրատուին վճարում է տուգանք՝ հայտնաբերված թերության վերացման համար կապալառուի կամ պատվիրատուի կողմից իրականացված փաստացի ծախսերի չափով:

2.4.5 Սույն պայմանագրի կատարման ընթացքում իրեն հայտնի դարձած տեղեկությունները չհրապարակել այլ անձանց:

2.4.6 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 730 օրացուցային օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կատարողը պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 1160000 (մեկ միլիոն մեկ հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[21] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

---

[21] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սպանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:
7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է **5** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատվիրատու	Կատարող
Պետական պահպանության ծառայություն	«ՍԱՄԱՐՏ-ՇԻՆ» ՍՊԸ
ք.Երևան, Պռոշյան փ. 1-ին փակուղի 20	Գործ. հասցե ք. Սիսիան, Գայի 13/30 .
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի	<<ԱԿԲԱ Բանկ ԲԲԸ>>
գործառնական վարչություն	Հ/Հ 220333330821000
Հ/հ 900011004497	ՀՎՀՀ 09811372
ՀՎՀՀ 00006796	
Պետ Վ. Հովհաննիսյան	Տնօրեն Ս. Օրդուխանյան

Հավելված N 1
« » 2022թ. կնքված
N ՊՊԾ-ԳՀԽԾՁԲ-1/2021-37-1 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ
դրամ

Ծառայության							
հիրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման		
					հասցեն	ժամկետը**	
						սկիզբ	ավարտ
1	71351540/501	դրամ	1160000	1	ք.Երևան Պռոշյան 1-ին փակուղի 20	Շինարարական աշխատանքների, տեխնիկական և հեղինակային հսկողության ծառայությունների ձեռքբերման համար կնքված պայմանագրերից (համաձայնագրերից) վերջինի ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրը	վերակառուցման՝ վերնահարկի իրականացման աշխատանքների ավարտի հետ

Ծառայության մատուցման ընդհանուր պահանջներ

1. Տեխնիկական հսկողությունը պետք է իրականացվի պատվիրատուի կողմից տրամադրվող նախագծանախահաշվային փաստաթղթերի հիման վրա և պետք է ապահովի վերանորոգման աշխատանքների իրականացումը անհրաժեշտ որակով և ինժեներական նախագծերին, տեխնիկական առանձնահատկություններին և այլ պայմանագրային փաստաթղթերին համապատասխան:
2. Տեխնիկական հսկողության ծառայությունները պետք է իրականացվեն ՀՀ Քաղաքաշինության նախարարի 28.04.1998թ.-ի N44 հրամանով հաստատված շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգով և Պատվիրատուի կողմից տրամադրվող պարտականությունների շրջանակներում:
3. Տեխնիկական հսկողություն իրականացնողի հիմնական պարտականություններն են՝
• շինարարության սկզբից մինչև ավարտը ընկած ժամանակահատվածում պարբերաբար լուսանկարահանել շինարարության օբյեկտի վիճակը,
• ապահովել կատարվող աշխատանքների համապատասխանությունը կապալի պայմանագրի պայմաններին, շինարարական նորմերին և կանոններին,
• Կապալառուի կողմից պայմանագրային պարտավորությունների կատարման շեղում հայտնաբերելուց անհապաղ տեղեկացնել Պատվիրատուին՝ կցելով համապատասխան հիմնավորումը,
• ստուգել և հաստատել աշխատանքային և կատարողական փաստաթղթերը՝ նախապատրաստված Կապալառուի կողմից,
• ստուգել և վերահսկել նյութերի որակը և շինարարական աշխատանքների ընթացքը, որպեսզի ապահովվի մասնագրերին և պայմանագրային մյուս փաստաթղթերին համապատասխանությունը: Արգելել կամ փոփոխել այն նյութերը, որոնք չեն համապատասխանում անհրաժեշտ պայմաններին,
• վերահսկել և գնահատել շինաշխատանքների գործընթացը, որպեսզի ապահովվի շինաշխատանքների ավարտը՝ համաձայն պայմանագրի մեջ նշված ժամանակացույցի,
• ստուգել բոլոր այն փորձարկումների արդյունքները, որոնք անհրաժեշտ են որակի ապահովման համար: Ստուգել բոլոր փաստաթղթերը (այդ թվում՝ բոլոր ծավալային չափերը և հաշվարկները), որոնք անհրաժեշտ են համապատասխան վճարումները իրականացնելու համար,
• կատարել որակի և քանակի **ամենօրյա** հսկումը (համապատասխան նշում կատարելով մատյանում), այն աշխատանքների անհրաժեշտ փորձարկումները, որոնք կատարվում են կապալի պայմանագրի իրականացման շրջանակում,
• շինարարության ժամանակ առաջացող խնդիրների դեպքում առաջարկել այն գործողությունները, որոնք անհրաժեշտ կլինեն աշխատանքային ժամանակացույցը պահպանելու համար,
• հսկել բոլոր այն հարցերը, որոնք կապված են շինաշխատանքներն անվտանգ իրականացնելու հետ և

հրահանգել Կապալառուին տեղադրել նշաններ, լուսավորության անվտանգության սարքերի և այլ համապատասխան միջոցառումների իրականացման համար,
• կատարել անհրաժեշտ օրական գրառումներ, որոնք անհրաժեշտ են պայմանագրի ընթացքի վերահսկման համար (ընդգրկելով կատարված աշխատանքների հավաստագրերը և այլ անհրաժեշտ փաստաթղթեր),
• կատարել աշխատանքների ծավալների չափագրումներ և մասնակցել կատարողական փաստաթղթերի կազմմանը և հաստատմանը,
• շինարարության ավարտից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին ներկայացնել Հաշվետվություն կատարված աշխատանքների վերաբերյալ՝ կցելով լուսանկարները, անհրաժեշտ գծագրերը, ծածկված աշխատանքների ակտերը, փորձարկման ակտերը, սերտիֆիկատները,
• Պատվիրատուի ցուցումով չափագրել կատարման ենթակա աշխատանքները:
• պարտադիր ներկա լինել քաղաքաշինության նախարարի թիվ 44 ա.ն 28.04.1998թ. «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ» հրամանի հավելված 1-ով նախատեսված ծածկման շինմոնտաժային աշխատանքների իրականացման ընթացքում:

Հաշվետվության ներկայացման պահանջներ

Կատարողը պարտավոր է ներկայացնել Պատվիրատուին ծառայությունների վերաբերյալ ընթացիկ և ավարտական հաշվետվություններ, որոնք հանդիսանում են ծառայությունների հանձնման-ընդունման արձանագրությունները հիմնավորող փաստաթղթեր:
Ընթացիկ հաշվետվությունները ներկայացվում են պարբերաբար, ընդգրկելով իրականացված ծառայությունները և կատարված աշխատանքները հավաստող ու հիմնավորող տեխնիկական փաստաթղթերի պատճենները (համառոտ նկարագրություն տվյալ ահատվածում իրականացված շինարարական աշխատանքների և տեխ.հսկողության ծառայությունների վերաբերյալ, լաբորատոր փորձարկումների արդյունքներ, նյութերի, կոնստրուկցիաների որակի համապատասխանության հավաստագրեր, ծածկված (միջանկյալ) աշխատանքների ընդունման ակտեր, նախքան շինարարության սկիզբը, ինչպես նաև ծածկված (միջանկյալ) աշխատանքների լուսանկարներ:
Ավարտական հաշվետվությունը պետք է ընդգրկի հետևյալ փաստաթղթերի պատճենները՝ ավարտական կատարողական փաստաթղթեր, ամփոփ նկարագրական տեղեկանք իրականացված շինարարական աշխատանքների ամբողջ ժամանակահատվածի համար, նախքան շինարարության սկիզբը, ինչպես նաև ավարտված շինարարական օբյեկտի լուսանկարներ:
Ընթացիկ հաշվետվությունները նաև ներկայացվում են շինարարական աշխատանքների յուրաքանչյուր կատարողական արձանագրությունը Ծառայություն մատուցողի կողմից ստորագրելուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում՝ Ծառայությունների հանձնման-ընդունման արձանագրությունների հետ մեկտեղ:
Ավարտական հաշվետվությունը ներկայացվում է շինարարական աշխատանքների ավարտական կատարողական արձանագրությունը Ծառայություն մատուցողի կողմից ստորագրելուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

	Ծառայության մատուցման ժամկետը	
	Սկիզբը	Ավարտը
	Շինարարական աշխատանքների, տեխնիկական և հեղինակային հսկողության ծառայությունների ձեռքբերման համար կնքված պայմանագրերից (համաձայնագրերից) վերջինի ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրը	վերակառուցման՝ վերնահարկի իրականացման աշխատանքների ավարտի հետ

Պատվիրատու
Պետական պահպանության ծառայություն
ք.Երևան, Պռոշյան փ. 1-ին փակուղի 20
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/հ 900011004497
ՀՎՀՀ 00006796

Պետ Ս. Հովհաննիսյան

Կատարող
«ՍԱՄԱՐՏ-ՇԻՆ» ՍՊԸ
Գործ. հասցե ք. Սիսիան, Գայի 13/30 .
<<ԱԿԲԱ Բանկ ԲԲԸ>>
Հ/Հ 220333330821000
ՀՎՀՀ 09811372

Տնօրեն Ս. Օրդուխանյան

Հավելված N 2
« » 2022թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	71351540/501	տեխնիկական հսկողության ծառայություններ	*սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախապես տրամադրելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*											

Պատվիրատու
Պետական պահպանության ծառայություն
ք.Երևան, Պռոշյան փ. 1-ին փակուղի 20
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/h 900011004497
ՀՎՀՀ 00006796

Պետ **Ս. Հովհաննիսյան**

Կատարող
«ՍԱՄԱՐՏ-ՇԻՆ» ՍՊԸ
Գործ. հասցե ք. Սիսիան, Գայի 13/30 .
<<ԱԿԲԱ Բանկ ԲԲԸ>>
Հ/Հ 220333330821000
ՀՎՀՀ 09811372

Տնօրեն **Ս. Օրդուխանյան**

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ ԸՍՏ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

«ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ՝ ՎԵՐՆԱՀԱՐԿԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

Հ/Հ	Աշխատանքների անվանումը	Չափ. միավ	Քանակ	Միավորի արժեքը ՀՀ դրամ	Ընդամենը ՀՀ դրամ
1	2	3	4	5	6
	1.1 Շինարարական աշխատանքներ				
	Ե/բ կոնստրուկցիաներ				
	ա/ 2-րդ հարկի կառուցում				
1	Գոյություն ունեցող ծածկի սալի շերտերի քանդում	$մ^3$	195,8	8 090,00	1 584 022,00
2	Աղբի կուտակում և բարձում ա/մեք վրա	$մ^3$	19,6	970,00	19 012,00
3	Նոսնի տեղափոխում 12կմ հեռավորության վրա	տ	35,1	1 320,00	46 332,00
4	100x100մմ չափերով անցքերի բացում գոյություն ոընեցող ծածկում	հատ	200	650,00	130 000,00
5	Գոյություն ունեցող պարզունակներում անցքերի բացում	հատ	30	650,00	19 500,00
6	Ամրանային ձողերի տեղադրում անցքերի մեջ և փռում ծածկի վրայով	տ	1,85	24 200,00	44 770,00
7	Ամրան Ա1 դասի	տ	0,005	381 000,00	1 905,00
8	Ամրան Ա500Ս դասի 10մմ	տ	1,84	381 000,00	701 040,00
9	Ծածկի սալի բետոնացում Բ20 դասի բետոնով	$մ^3$	14,3	61 600,00	880 880,00
10	<<Ա>> և <<Գ>> առանցքներով շրջանակների միաձույլ ե/բ սյուների կառուցում Բ20 բետոնից	$մ^3$	6,8	61 600,00	418 880,00
11	Ամրան Ա1 դասի	տ	0,218	381 000,00	83 058,00
12	Ամրան Ա500Ս դասի 20մմ	տ	0,504	381 000,00	192 024,00
13	Պողպատե թիթեղ	տ	0,088	633 000,00	55 704,00
14	<<Ա>> և <<Գ>> առանցքներով շրջանակների ե/բ պարզունակների կառուցում Բ20 բետոնից	$մ^3$	21	61 600,00	1 293 600,00
15	Ամրան Ա1 դասի	տ	0,75	381 000,00	285 750,00
16	Ամրան Ա500Ս դասի 12մմ	տ	0,372	381 000,00	141 732,00
17	Ամրան Ա500Ս դասի 16մմ	տ	1,414	381 000,00	538 734,00
18	<<Ա>> և <<Գ>> առանցքներով շրջանակների ե/բ պարզունակների կառուցում Բ20 բետոնից	$մ^3$	0,2	61 600,00	12 320,00

19	<<Ա>> և <<Գ>> առանցքներով շրջանակների ե/բ գոտիների կառուցում B20 բետոնից	մ^3	0,15	61 600,00	9 240,00
20	Ամրան Ա1 դասի	տ	0,007	381 000,00	2 667,00
21	Ամրան Ա500Ս դասի 12մմ	տ	0,038	381 000,00	14 478,00
22	<<1>> և <<7>> առանցքներով շրջանակների միաձույլ ե/բ սյուների կառուցում B20 բետոնից	մ^3	2	61 600,00	123 200,00
23	Ամրան Ա1 դասի	տ	0,045	381 000,00	17 145,00
24	Ամրան Ա500Ս դասի 16մմ	տ	0,125	381 000,00	47 625,00
25	<<1>> և <<7>> առանցքներով շրջանակների ե/բ պարզունակների կառուցում B20 բետոնից	մ^3	14,5	61 600,00	893 200,00
26	Ամրան Ա1 դասի	տ	0,602	381 000,00	229 362,00
27	Ամրան Ա500Ս դասի 12մմ	տ	0,254	381 000,00	96 774,00
28	Ամրան Ա500Ս դասի 16մմ	տ	1,094	381 000,00	416 814,00
29	<<1>> և <<7>> առանցքներով շրջանակների ե/բ պարզունակների կառուցում B20 բետոնից	մ^3	0,25	61 600,00	15 400,00
30	<<1>> և <<7>> առանցքներով շրջանակների ե/բ գոտիների կառուցում B20 բետոնից	մ^3	0,15	61 600,00	9 240,00
31	Ամրան Ա1 դասի	տ	0,009	381 000,00	3 429,00
32	Ամրան Ա500Ս դասի 12մմ	տ	0,047	381 000,00	17 907,00
33	Միաձույլ ե/բ գոտու կառուցում 9.05 նիշի վրա B20 բետոնից	մ^3	1,3	61 600,00	80 080,00
34	ԾՍՄ-2 միաձույլ ե/բ ծածկի սալի կառուցում B20 բետոնից	մ^3	32,8	61 600,00	2 020 480,00
35	Ամրան Ա1 դասի	տ	0,061	381 000,00	23 241,00
36	Ամրան Ա500Ս դասի 12մմ	տ	0,117	381 000,00	44 577,00
37	Ամրան Ա500Ս դասի 10մմ	տ	3,113	381 000,00	1 186 053,00
	բ/ Կցակառույց				
38	Գրունտի քանդում հիմքերի տակ	մ^3	14	670,00	9 380,00
39	Ավելորդ գրունտի բարձում ա/մեք վրա	մ^3	5,5	970,00	5 335,00
40	Գրունտի հետլիցք	մ^3	8,5	650,00	5 525,00
41	Խամքարաբետոնե նախաշերտ հիմքերի տակ B7.5 բետոնից	մ^3	1,2	32 500,00	39 000,00
42	Ժապավենաձև միաձույլ ե/բ հիմքերի կառուցում B20 բետոնից	մ^3	4,2	61 600,00	258 720,00
43	Ամրան Ա1 դասի	տ	0,182	381 000,00	69 342,00
44	Ամրան Ա500Ս դասի 14մմ	տ	0,184	381 000,00	70 104,00
45	Կցակառույցի շրջանակների միաձույլ ե/բ սյուների և կանգնակների կառուցում B20 բետոնից	մ^3	6,15	61 600,00	378 840,00
46	Ամրան Ա1 դասի	տ	0,181	381 000,00	68 961,00

47	Ամրան A500C դասի 16մմ	տ	0,05	381 000,00	19 050,00
48	Ամրան A500C դաս 12մմ	տ	0,018	381 000,00	6 858,00
49	Ամրան A500C դաս 25մմ	տ	0,536	381 000,00	204 216,00
50	Պողպատե թիթեղ	տ	0,026	663 000,00	17 238,00
51	Կցակառույցի շրջանակների միաձույլ ե/բ պարզունակների և հեծանների կառուցում	$մ^3$	21,7	61 600,00	1 336 720,00
52	Ամրան A1 դասի	տ	0,714	381 000,00	272 034,00
53	Ամրան A500C դասի 12մմ	տ	0,05	381 000,00	19 050,00
54	Ամրան A500C դասի 16մմ	տ	1,48	381 000,00	563 880,00
55	Կցակառույցի շրջանակների գոտու կառուցում B20 բետոնից	$մ^3$	0,3	61 600,00	18 480,00
56	Ամրան A1 դասի	տ	0,006	381 000,00	2 286,00
57	Ամրան A500C դասի 12մմ	տ	0,028	381 000,00	10 668,00
58	Միաձույլ ե/բ աստիճանների կառուցում B20 բետոնից	$մ^3$	3,5	61 600,00	215 600,00
59	Ամրան A1 դասի	տ	0,033	381 000,00	12 573,00
60	Ամրան A500C դասի 16մմ	տ	0,345	381 000,00	131 445,00
61	Ամրան A500C դասի 8մմ	տ	0,07	381 000,00	26 670,00
	Ընդամենը ե/բ կոնստրուկցիաներ				15 462 150,0
	Պատեր և միջնորմներ				
62	Արտաքին պատերի շարում 200մմ հաստության կանոնավոր տուֆից	մ3	83,3	20 300,00	1 690 990,00
63	Արտաքին պատերի շարում 100մմ հաստության խարամաբետոնե բլոկերից	մ3	41,7	20 300,00	846 510,00
64	Շարվածքների ամրանավորում	տ	0,68	381 000,00	259 080,00
65	Միջնորմների շարում 150մմ հաստության խարամաբետոնե բլոկերից	մ3	40,200	20 300,00	816 060,00
66	Միջնորմների շարում 100մմ հաստության խարամաբետոնե բլոկերից /սան հանգույցներում/	մ3	1,600	21 100,00	33 760,00
67	Միջնորմների ամրանավորում	տ	0,570	381 000,00	217 170,00
68	Միջնորմների բլոկերի անցքերի լցում թեթև բետոնով	մ3 շարվածք	41,800	44 900,00	1 876 820,00
	Ընդամենը Պատեր և միջնորմներ				5 740 390,0
	Տանիք				
69	Հականեխիչ նյութով մշակված փայտե կոնստրուկցիաների տեղադրում	$մ^3$	6,78	231 000,00	1 566 180,00
70	Ջրհորդանի հոծ տախտակամածի կառուցում 50մմ հաստության տախտակից	$մ^2$	51	11 700,00	596 700,00
71	Կավարամածի իրականացում 50x50մմ չորսուներից	$մ^2$	288,2	1 300,00	374 660,00
72	Ջրհորդանի ծածկույթ 0.7մմ հաստության գունավոր հարթ թիթեղով	մ	36,1	5 900,00	212 990,00

73	Տանիքի ծածկույթ գունավոր պրոֆիլավոր ցինկապատ մետաղաթիթեղից ԿՊ21-0.55	մ^2	333,2	5 200,00	1 732 640,00
74	Ձագարներով ջրահեռացման խողովակների տեղադրում գունավոր հարթ թիթեղից h=9.1մ	կոմպլ	5	18 600,00	93 000,00
75	Փայտե կոնստրուկցիաների հրապաշտպանություն	մ^3	6,78	15 400,00	104 412,00
76	Նույնը կավարամածի և տախտակամածի	մ^2	333,2	160,00	53 312,00
77	Գոլորշամեկուսիչ շերտ ռուբերոիդից	մ^2	287,7	650,00	187 005,00
78	Ջերմամեկուսիչ շերտ խարամով 50մմ հաստության	մ^3	14,4	38 900,00	560 160,00
	Ընդամենը տանիք				5 481 059,0
	4 Բացվածքներ				
79	Դ-5 մետաղապլաստե դարպասների տեղադրում - 3 հատ 3.4x3.7մ	հատ	3,0	909 000,00	2 727 000,00
80	Ապակեփաթեթով կաղնու գույնի բարդ փականով և հակամիջատային ցանցով պատուհանների տեղադրում /բացվող մաս/	մ2	17,6	34 000,00	596 700,00
81	Ապակեփաթեթով կաղնու գույնի պատուհանների տեղադրում /խուլ մաս/	մ2	17,6	28 400,00	498 420,00
82	Կաղնու գույնի պլաստմասե 30սմ լայնության պատուհանագոգերի տեղադրում	մ	20,8	4 400,00	91 520,00
83	Ապակեփաթեթով ջերմամեկուսացված կաղնու գույնի արտաքին դռան տեղադրում /բացվող մաս/	մ2	2,1	40 600,00	85 260,00
84	Ապակեփաթեթով ջերմամեկուսացված կաղնու գույնի արտաքին դռան տեղադրում /խուլ մաս/	մ2	0,5	36 500,00	18 250,00
85	Կաղնու գույնի ներքին դռների տեղադրում	մ2	28,000	40 600,00	1 136 800,00
	Ընդամենը բացվածքներ				5 153 950,0
	5 Հատակներ				
86	Խճով տոփանված գրունտ /կցակառույց 1 հարկ/	մ^3	13,6	4 300,00	58 480,00
87	Խճե նախաշերտ 200մմ հաստության /կցակառույց 1 հարկ/	մ^3	2,72	6 600,00	17 952,00
88	Բետոնե նախաշերտ 120մմ հաստության /կցակառույց 1 հարկ/	մ^3	1,64	26 000,00	42 640,00
89	Շերտի ամրանավորում Ա1 - 8մմ ամրանային ցանցով	տ	0,16	343 000,00	54 880,00
90	Ջերմամեկուսիչ շերտ 270մմ հաստության խարամից	մ^3	68,8	22 700,00	1 561 760,00
91	Թեթև բետոնից շերտ 80մմ հաստության	մ^3	23,3	26 000,00	605 800,00
92	Ցեմենտ ավազե հարթեցնող շերտ 30մմ հաստության	մ^2	17,7	1 500,00	26 550,00
93	Ցեմենտ ավազե հարթեցնող շերտ 80մմ հաստության	մ^2	239,6	2 500,00	599 000,00
94	Մետլախե հատակների կառուցում սան հանգույցներում	մ^2	16,2	6 400,00	103 680,00
95	Լամինատե հատակների կառուցում սպունգով և շրիշակով	մ^2	164,8	5 200,00	856 960,00
96	Պրես-գրանիտե սալերից հատակների կառուցում	մ^2	62,7	6 400,00	401 280,00
97	Պրես-գրանիտե սալերից շրիշակների իրականացում	մ	50,6	1 400,00	70 840,00

98	Աստիճանների երեսպատում պրես-գրանիտե սալերով	մ^2	8,1	6 400,00	51 840,00
	Ընդամենը հատակներ				4 451 662,0
	6 Հարդարման աշխատանքներ				
99	<<Արմստրոնգ>> տիպի կախովի առաստաղների մոնտաժում սան հանգույցներում	մ2	16,2	6 400,00	103 680,00
100	Պատերի սվաղում ցեմենտ ավազե շաղախով	մ2	99,8	1 900,00	189 620,00
101	Պատերի երեսպատում հախճասալերով	մ2	99,80	7 700,00	768 460,00
102	Բացվածքների շեպերի գաջե սվաղում	մ2	11	4 300,00	47 300,00
103	Պատերի և միջնորմների բարձրորակ գաջե սվաղում	մ2	803	1 850,00	1 485 550,00
104	Առաստաղների բարձրորակ գաջե սվաղում	մ2	263,7	1 850,00	487 845,00
105	Պատերի և շեպերի բարձրորակ լատեքսային ներկում	մ2	803,0	1 950,00	1 565 850,00
106	Առաստաղների բարձրորակ լատեքսային ներկում	մ2	263,7	1 950,00	514 215,00
107	Բացվածքների արտաքին շեպերի սվաղում ցեմենտ ավազե շաղախով	մ	128,4	4 150,00	532 860,00
108	Պատուհանների արտաքին ցվիքների ծածկում հարթ գունավոր 0.5մմ հաստության թիթեղով	մ2	3,0	5 300,00	15 900,00
109	Գետնախարսխի երեսպատում բազալտե 30մմ հաստության սալերով	մ2	49,80	19 400,00	966 120,00
110	Արտաքին պատերի երեսպատում ֆելզիտե 30մմ հաստության սալերով	մ2	246,5	19 400,00	4 782 100,00
111	Արտաքին պատերի սվաղում ցեմենտ ավազե շաղախով ցանցի վրայով	մ2	283,2	3 200,00	906 240,00
112	Նույնի ներկում ճակատային ներկով	մ2	283,2	2 100,00	594 720,00
113	Գույքային տախտակամածի տեղադրում և քանդում արտաքին հարդարման աշխատանքների համար	մ2	520,00	1 300,00	676 000,00
	Ընդամենը Հարդարման աշխատանքներ				13 636 460,0
	ԸՆԴԱՄԵՆԸ՝ 1.1 Շինարարական աշխատանքներ				**49 925 671,0**
	1.2 Ներքին կոյուղի				
1	Պոլիէթիլենե 110մմ խողովակի տեղադրում	մ	25	2 500,00	62 500,00
2	Պոլիէթիլենե 50մմ խողովակի տեղադրում	մ	8	2 000,00	16 000,00
3	Կերամիկական զուգարանակոնքի տեղադրում	կոմպլ	4	29 200,00	116 800,00
4	Կերամիկական լվացարանի տեղադրում սիֆոնով	կոմպլ	2	22 700,00	45 400,00
5	Պոլիէթիլենե ստուգիչ 100մմ	հատ	1	2 900,00	2 900,00
6	Ծածկի սալի անցքի բացում և փակում	տեղ	4	1 050,00	4 200,00
7	Պոլիէթիլենե ձևավոր մասեր	հատ	12	2 400,00	28 800,00
8	Միացում գոյություն ունեցող կոյուղագծին	տեղ	1	4 900,00	4 900,00

	ԸՆԴԱՄԵՆԸ՝ 1.2 Ներքին կոյուղի				281 500,0
	1.3 Ներքին ջրագիծ				
1	Պոլիէթիլենե 20մմ ջրի խողովակի տեղադրում	մ	20	2 400,00	48 000,00
2	Պոլիէթիլենե 15մմ ջրի խողովակի տեղադրում	մ	15	2 300,00	34 500,00
3	Լատունե վենտիլ 20մմ	հատ	2	5 300,00	10 600,00
4	Լատունե վենտիլ 15մմ	հատ	6	3 300,00	19 800,00
5	Ջրի ծորակի տեղադրում	հատ	2	14 600,00	29200,00
6	Պոլիէթիլենե ձևավոր մասեր	հատ	10	530,00	5 300,00
7	Միացում գոյություն ունեցող ջրագծին 20մմ	տեղ	1	4 050,00	4 050,00
8	Համակարգի փորձարկում	մ	35	240,00	8 400,00
9	Ծածկի անցքի բացում և վերականգնում	տեղ	1	1 037,2524	1 037,2524
	ԸՆԴԱՄԵՆԸ՝ 1.3 Ներքին ջրագիծ				160 887,252
	1.4 Էլեկտրատեխնիկական մաս				
1	Էլեկտրական լուսավորության վահանակի տուփ 295x195x150	հատ	1	132 000,00	132 000,00
2	Մուտքային ավտոմատ անջատիչ 60Ա միաֆազ	հատ	1	38 300,000	38 300,000
3	Մուտքային ավտոմատ անջատիչ 32Ա միաֆազ	հատ	6	9 600,00	57 600,00
4	Մուտքային ավտոմատ անջատիչ 25Ա միաֆազ	հատ	6	3 600,00	21 600,00
5	Լուսադիոդային լուսատու առաստաղի 2x11Վտ հզորության	հատ	15	14 600,00	219 000,00
6	Լուսադիոդային լամպով լուսատու ջահ 4x11/100Վտ	հատ	9	12 500,00	112 500,00
7	Լուսադիոդային լուսատու կախովի առաստաղի 1x11Վտ	հատ	6	13 000,00	78 000,00
8	Հողանցումով երկստեղանի վարդակ	հատ	5	1 600,00	8 000,00
9	Հողանցումով միաստեղանի վարդակ	հատ	12	1 300,00	15 600,00
10	Միաբևեռ անջատիչ	հատ	8	1 300,00	10 400,00
11	Երկբևեռ անջատիչ	հատ	10	1 650,00	16 500,00
12	Տուփ բաժանարար	հատ	20	150,00	3 000,00
13	Տուփ անջատիչների և վարդակների	հատ	30	200,00	6 000,00
14	Հաղորդալար պղնձե ՊՊՎ 2x2.5մմ2	մ	1350	650,00	877 500,00
15	Հաղորդալար պղնձե ՊՎ 1x2.5մմ2	մ	1150	540,00	621 000,00
16	Ճկախողովակ 25մմ	մ	1350	540,00	729 000,00
17	Մալուխ պղնձե ՎՎԳ 3x16մմ	մ	20	4 200,00	84 000,00
	ԸՆԴԱՄԵՆԸ՝ 1.4 էլեկտրատեխնիկական մաս				3 030 000,00
	Ընդհանուրը				53 398 058,25
	Չնախատեսված աշխատանքներ 3%				1 601 941,75
	Ընդամենը				55 000 000,00
	ԱԱՀ 20%				11 000 000,00
	Ընդամենը ամբողջը՝ ներառյալ ԱԱՀ-ն				66 000 000,00

Հավելված 3
« » 2022թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 2022թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված N 4
« » 2022թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Ծառայության մատուցման մեթոդաբանություն

Հ/Հ	Աշխատանքի անվանումը	Նկարագիրը
1	2	3
1	Հողային աշխատանքներ	Հիմքերի նշահարում, հիմքերի համար բացված փոսորակների և խրամուղիների զննում, երկրաբանի եզրակացություն:
2	Բետոնային աշխատանքներ	Բետոնի համապատասխանումը նախագծին և ՇՆու Կ-ին / բետոնի փորձարկման ակտեր/
3	Ամրանային աշխատանքներ	Ամրանների տեղադրումը ըստ նախագծի, ամրանի սերտիֆիկատը, ծախսված աշխատանքների ակտեր:
4	Պատեր և միջնորմներ	Իրականացումը և ամրանավորումը ըստ նախագծի և նորմերի:
5	Տանիք	Տանիքի չափերի նշահարում կախված նրա տեսակից և ձևից:
6	Բացվածքներ	Բացվածքների չափագրում, նշահարում համաձայն նախագծի:
7	Հատակներ	Հատակները իրականացնել ըստ անհրաժեշտ և պահանջվող շերտերի, համաձայն նորմերի և նախագծի:
8	Հարդարման աշխատանքներ	Իրականացնել ժամանակակից տեխնալոգիաներով և նյութերով: Որոշ աշխատանքներ համաձայնեցնել պատվիրատուի հետ:
9	Ինժեներական մաս	Նախագծին համապատասխան աշխատանքների իրականացումից հետո, կատարել համապատասխան փորձարկումներ:
10	Ասֆալտաբետոն	Աշխատանքները իրականացնել համապատասխան տեխնոլոգիական նորմերով և համաձայն նախագծի:Հաշվի առնել կլիմայական պայմանները:
11	Փորձարկումներ և հսկողության գրաֆիկ	Առանձին տեսակի աշխատանքների և կոնստրուկցիաների ակտերը, հաստատված համապատասխան կազմակերպությունների /լաբորատորիաների/ կողմից:
12	Աշխատանքների ընդունում	Ըստ կատարողական ակտերի կատարված ծավալների ճշտում, ծածկված աշխատանքների ակտեր, փորձարկման ակտեր, համապատասխան սերտիֆիկատներ, աշխատանքները բնութագրող համապատասխան լուսանկարներ:

Պատվիրատու
Պետական պահպանության ծառայություն
ք.Երևան, Պռոշյան փ. 1-ին փակուղի 20
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/h 900011004497
ՀՎՀՀ 00006796

Պետ **Ս. Հովհաննիսյան**

Կատարող
«ՍԱՄԱՐՏ-ՇԻՆ» ՍՊԸ
Գործ. հասցե ք. Սիսիան, Գայի 13/30 .
<<ԱԿԲԱ Բանկ ԲԲԸ>>
Հ/Հ 220333330821000
ՀՎՀՀ 09811372

Տնօրեն **Ս. Օրդուխանյան**

Հավելված N 5
« » 2022թ. կնքված
ծածկագրով պայմանագրի
Աղյուսակ N 1

«ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ՝ ՎԵՐՆԱՀԱՐԿԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

<u>կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաների և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներ</u>

Հ/Հ	Նախագծանախահաշվային փաստաթղթերով նախատեսված նյութեր և սարքավորումներ	Նախագծողի կոմից սահմանվածերաշխիքային ժամկետ /տարի/
	1.Շենքեր	
1	Շենքերի երաշխիքային ժամկետները	125
	Շենքերի կոնստրուկտիվ էլեմենտները	
2.	Հիմքեր	125
3	Սյուներ, հեծաններ ե/բետոնյա միաձույլ	125
4	Ծածկեր: ե/բետոնյա հավաքովի և միաձույլ	125
5	Հատակներ:	
	փայտե	30
	խեցեգրանիտե, խեցեսալիկներ	60
6	Տանիք:	
	կավարամած, տախտակամած, թեքան, ծպեղնաոտք	50
	տրամատավոր ցինկապատ թիթեղից	40
	ցինկապատ հարթ թիթեղից	25
7	Ջրահեռացման համակարգ: խողովակներ ցինկապատ հարթ թիթեղից	8
8	Միջնորմներ պեմզոբետոնե բլոկներից	75
9	Դռներ և պատուհաններ	50
10	Սվաղային աշխատանքներ	50
11	Ներկարարական աշխատանքներ:	
	յուղաներկ	5
	լատեքս	5
12	Ջրամատակարարման և կոյուղու սարքեր/լվացարան, ծորակ, խառնիչ ցնցուղով/	15
13	Ջրամատակարարման և կոյուղու խողովակներ	30
14	Էլեկտրալուսավորության սարքեր /անջատիչներ,վարդակներ, լուսատու /	10